



## ԵՐԵՔՆՈՒԿ /Trifolium/



Երեքնուկի հայկական անվանումներից է - սիրի-սիրի, երեք տերևուկ, խնձորուկ:

Մարգագետնային երեքնուկը երկամյա կամ բազմամյա խոտաբույս է: Պատկանում է ընդավորների (Fabaceae) ընտանիքին: Ունի ճյուղավորված և վեր բարձրացող ցողուն: Այն ուղիղ է, խավավորված, հասնում է մինչև 60սմ բարձրության, մեկ բույսն ունի 3-8 ցողուններ: Տերևները եռափայտ են, տերևիկները՝ երկարավուն ու ձվաձև: Ծաղիկները թիթեռնաձև են, գունատ կամ մուգ կարմիր՝ հավաքված գնդաձև ծաղկաբույլերում, տերևանման փաթեթներով: Պտուղը ձվաձև, միասերմ ունդ է: Բույսը ծաղկում է

մայիսից մինչև աշուն: Պտուղները հասունանում են օգոստոս ամսից մինչև հոկտեմբեր: Երեքնուկն աճում է մարգագետիններում, թփուտներում, անտառների բացատներում:



### Հումքի հավաքումը և չորացումը

Դեղագործական նպատակով օգտագործում են երեքնուկի գլխաձև ծաղկաբույլերը և կանաչ զանգվածը: Հավաքում են այն ժամանակահատվածում, երբ բույսը գտնվում է ծաղկման շրջանում: Ծաղկաբույլերը հավաքում են ձեռքով կամ էլ՝ կտրում դանակով, առանց ծաղկակոթունի: Բույսերի մի մասը պահպանում են, որպեսզի նրանք բնական ճանապարհով վերականգնեն իրենց տարածքները: Չորացնում են բաց օդում՝ ծածկի տակ, վերնահարկերում: Փռում են բարակ շերտով: Կարելի է չորացնել նաև չորանոցներում՝ 60-70°C ջերմաստիճանային պայմաններում: Շատ


չորացնել խորհուրդ չի տրվում, քանի որ երեքնուկի գլխիկները կարող են փշրվել: Ծաղիկների պահպանման ժամկետը 2 տարի է, կանաչ զանգվածինը՝ 1 տարի: Մարգագետնային երեքնուկի հետ նույն տարածքում հանդիպում է նաև սողացող երեքնուկը (*Trifolium repens* L.), որն ունի սողացող ցողուն և սպիտակ գույնի ծաղիկներ: Հանդիպում է նաև հիբրիդային երեքնուկը (*Trifolium hybridum* L.)՝ վարդագույն մանր ծաղկաբույլերով: Ի տարբերություն մարգագետնային երեքնուկի, այս վերջինների մոտ տերևները հարթ են և կենսաբանական ակտիվ նյութեր քիչ են պարունակում:



## Քիմիական կազմը

Ծաղիկները պարունակում են գլիկոզիդներ՝ տրիֆոլին և իզոտրիֆոլին, կարոտին, ասկորբինաթթու, B1, B3, E վիտամիններ, պիգմենտներ (ներկանյութեր), եթերայուղ (մինչև 0,028%) և ճարպայուղ (մինչև 6%), օրգանական թթուներ (նոր-կումարին, սալիցիլաթթու, կետոգլուտարոթթու, դիկարբոնաթթու):

Եթերայուղի կազմի մեջ մտնում են ֆուրֆուրոլ և մեթիլթրեվային կումարին: Մարգագետնային երեքնուկի կանաչ զանգվածը պարունակում է եթերայուղեր և ճարպայուղեր, դաբաղող նյութեր, գլիկոզիդներ (տրիֆոլին և իզոտրիֆոլին), կումարինաթթու, սալիցիլաթթու, սիտոստերոլ, իզոֆլավոններ, խեժեր, թիամին, ռիբոֆլավին, կարոտին, ասկորբինաթթու, տոկոֆերոլ: Մերմերում կա մոտ 11,8% կիսաչորացած ճարպայուղ: Մշակովի մարգագետնային երեքնուկն առանձնանում է սպիտակուցի, հանքային նյութերի և կարոտինի մեծ քանակությամբ:



## Ֆարմակոլոգիական հատկությունները

Երեքնուկի ծաղիկներն օժտված են հակաբորբոքային, խորխաբեր, քրտնաբեր, հականեխիչ (անտիսեպտիկ), արյունը վերականգնող, կապող, դեսենսիֆիլացնող հատկություններով:



## Կիրառումը բժշկությունում

Ժողովրդական բժշկության մեջ արմատների եփուկն օգտագործվում է ճողվածքների, կանացի օրգանների բորբոքումների դեպքում և որպես հակաուռուցքային միջոց: Արմատներից անջատվել է հակասնկային նյութ՝ տրիֆոլիրիզին:

Վերգետնյա մասն օգտագործվում է որպես հակասկլերոտիկ,



հականեխիչ, հակալնդախտային, հակառախիտային, կապող, ախորժաբեր, հակամալարիային, միզամուղ, գլխացավերը և գլխապտույտները վերացնող միջոց: Ժողովրդական բժշկությունում եփուկը և թուրմն օգտագործում են ասթենիայի, սակավարյունության, արգանդային արյունահոսությունների, բրոնխիալ ասթմայի, շնչարգելության, նորմալ ճնշումով աթերոսկլերոզի ժամանակ, ինչպես նաև որպես հակաքաղցկեղային միջոց: Հյութն օգտագործվում է արդեն նշված հիվանդությունների, ինչպես նաև բրոնխիտների, քրոնիկական հազի, պոդագրայի, թունավորումների, սուր մրսածությունների ժամանակ և որպես հակաուռուցքային միջոց: Արտաքին ձևով (սպեղանի, տաք թրջոցներ, կոմպրեսներ) օգտագործվում է դիաբեզի, չարորակ ուռուցքների, աբցեսների (թարախակույտ), այրվածքների, ռևմատիկ ցավերի ժամանակ՝ որպես վերքերը բուժող, հակաուռուցքային, փափկեցնող և ցավամոքիչ միջոց:

Երեքնուկի հյութն օգտագործում են նաև պանարիցիայի (մատնաշունչ), ձողվածքների, ականջի և աչքի հիվանդությունների ժամանակ:

Թարմ ծաղկող բույսերից ստացված էսենցիան օգտագործում են հոմեոպաթիայում:

Թարմ տերևներն արտաքին ձևով կիրառվում են որպես արյունականզնիչ և վերքերն ապաքինող միջոց:




Հյութն օգտագործվում է սկրոֆուլյոզի ժամանակ, իսկ եփուկը (արտաքին)՝ աբցեսների, այրվածքների, ռևմատիկ ցավերի դեպքում՝ որպես հակաուռուցքային, փափկեցնող, ցավամոքիչ, հակաբորբոքային, վերքերը ապաքինող միջոց:

Ծաղկաբույլերն արտաքին ձևով կիրառվում են պարոնախիայի և պանարիցիայի, ականջի և աչքի հիվանդությունների, ցրտահարությունների, պառկելախոցերի, աբցեսների, խոցերի ժամանակ:

Եփուկը կիրառվում է ներքին ձևով միզաքարային հիվանդության, քրոնիկական հազի, բրոնխիալ ասթմայի, սակավարյունության, գեղձերի հիվանդության ժամանակ:

**Դեղաձևերը, օգտագործման մեթոդները և չափաքաժինները**



**Երեքնուկի արմատների եփուկ.** 20գ մանրացված հումքի վրա ավելացնել 200 մլ տաք ջուր, փակ էմալապատ ամանի մեջ 30ր եռացնել ջրային բաղնիքում: Այնուհետև

տաք վիճակում 2-3 շերտ թանգիֆոլ (մառլյա) քամել, եռման ջրով ծավալը հասցնել սկզբնականին: Օգտագործել ուտելուց առաջ, 1ճ/գ, օրը՝ 4-5 անգամ:

**Երեքնուկի ծաղկաբույլի թուրմ.** 20գ հումքին ավելացնել 200մլ եռացրած ջուր, 1 ժամ թրմել ու քամել: Օգտագործել 2-3 ճ/գ կամ 1/2 բաժակ, օրը 3 անգամ:

**Երեքնուկի ծաղկաբույլերի եփուկ.** 20 գ հումքին ավելացնում են 250 մլ ջուր, եռացնում 15 րոպե, թրմում 30 րոպե և քամում: Օգտագործում են 2/4 բաժակ, օրը՝ 3-4 անգամ:

**Երեքնուկի կանաչ զանգվածի թուրմ.** 40 գ հումքին ավելացնում են 200 մլ եռման ջուր, 1 ժամ թրմում են և քամում: Օգտագործում են 1/4-1/3 բաժակ՝ 1գդալ մեղրի հետ, օրը՝ 3-4 անգամ:



## Կիրառումն այլ բնագավառներում

Երեքնուկի վերգետնյա մասերի օգտագործմամբ՝ գործվածքները կանաչ գույն են ներկում: Երիտասարդ թարմ տերևներն օգտագործում են որպես հազար, եփած վիճակում փոխարինում է սպանախին: Նախկինում՝ տարեկանի հաց թխելիս, երեքնուկի չորացրած, մանրացրած տերևները խառնել են ալյուրի հետ: Ինչպես նաև օգտագործել են թանձրուկների (սոուս) պատրաստման և պանրի արտադրության մեջ: Ծաղկաբույլերը դեղին գույն են տալիս: Երեքնուկն արժեքավոր կերաբույսերից մեկն է: 100կգ մարգագետնային երեքնուկից ստացված խոտը պարունակում է 52,2 կերային միավոր: Բույսն օգտագործում են որպես կանաչ կեր, կիրառում են նաև սենած և սիլոս պատրաստելիս: Մերմերը հավաքելուց հետո ձողոտը որպես կեր են օգտագործում: Տերևներից վիտամինային կոնցենտրատներ (խտանյութեր) են ստանում: Մարգագետնային երեքնուկը հողը հարստացնում է ազոտով: Մեղրատու բույս է: 1 հա-ից մեղուները մինչև 200կգ մեղր են պատրաստում: Մեկ ծաղիկը պարունակում է 0,25-0,45մգ նեկտար: Մեղրը ունենում է բաց գույն, հոտավետ, կարմրա-դեղնավուն:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):